ԼԻԼԻԹ ՔՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
կրտսեր գիտաշխատող
L.Qosyan@gmail.com

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1895–1899 ԹԹ.)

Բանալի բառեր՝ Կովկասի հայոց բարեգործական ընկերություն, մասնաճյուղ, Խորհուրդ, գաղթականություն, զանգվածային կոտորած:

Օսմանյան կայսրությունն Արևմտյան Հայաստանը գրավելուց ի վեր, դարեր շարունակ վարել է հայերին ձուլելու, Հայաստանը հայաթափելու քաղաքականություն: 19-րդ դարի վերջին համոզվելով, որ հայ ժողովրդին ձուլելու, հայաթափելու քաղաքականությունը սպասված արդյունքը չի տալիս, անցնում է հայերի ֆիզիկական ոչնչացման քաղաքականության իրագործմանը: Այդ քաղաքականության հիմքը դրեց Աբդուլ Համիդ II-ը՝ 1894–1896 թթ.: Զանգվածային կոտորածներն ունեցան անդառնալի հետևանքներ: Սպանվեց ավելի քան 300.000 հայ, հսկայական չափերի հասան արտագաղթն ու բռնի կրոնափոխությունը[1]:

Համիդյան ջարդերից մազապուրծ արևմտահայությունը սփռվեց աշխարհով մեկ: Նրանք հայտնվեցին սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում՝ ապրուստի, սննդի և կենցաղի, տարրական պայմաններից զուրկ, ինչի հետևանքով նրանց շրջանում տարածվում էին նաև տարափոխիկ հիվանդություններ: Արևմտահայութ-

[1] *Հայոց պատմություն, Հատոր III, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – 1918 թ.),* Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), Ե., 2010, էջ 538:

յան խնդիրները փոքր ինչ սփոփելու համար անհրաժեշտ էր շուտափույթ ձեռնարկել լուրջ քայլեր:

Օգնության ձեռք մեկնեց արևելահայ, սփյուռքահայ, ռուս և միջազգային առաջադեմ հանրությունը, ստեղծվեցին հասարակական և կրոնական մարդասիրական տարբեր կազմակերպություններ:

Ի թիվս այլոց, արևմտահայ գաղթականներին օգնության ձեռք մեկնեց նաև Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը (այսուհետև՝ ԿՀԲԸ): Այն հիմնադրվել է 1881 թ. նոյեմբերի 15-ին Թիֆլիսում՝ բժիշկ Բ. Նավասարդյանի նախաձեռնությամբ: 1899 թ. ընկերությունն ուներ 21 մասնաճյուղ Կովկասի կառավարչապետությունում[2]:

Փախստականների վիճակի և ԿՀԲԸ-ն կողմից նրանց ցուցաբերած օգնության լուսաբանման գլխավոր սկզբնաղբյուրներից է Հայաստանի ազգային արխիվում պահվող 28 (Կովկասի հայոց բարեգործական ընկերություն) ֆոնդը[3]:

Սկզբնական շրջանում ԿՀԲԸ-ը քայլեր չէր կարող ձեռնարկել արևմտահայ փախստականներին օգնելու գործում, քանի որ բարեգործական ընկերության կանոնադրությունը թույլ չէր տալիս գործունեություն ծավալել կառավարչապետության սահմաններից դուրս: 1895 թ. աշնանը, շուրջ չորս հազար տրապիզոնցի գաղթականներ, հիմնականում կանայք և երեխաներ, անցան ռուս-թուրքական սահմանը և ապաստանեցին Կովկասի կառավարչապետության տարբեր գավառներում, գլխավորապես Երևանի նահանգում: Վրացա-իմերեթական թեմի առաջնորդ Գևորգ արքեպիսկոպոս

---

[2] Մանրամասն տե՛ս **Լեո,** *Երեսնամեակ Հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում 1881–1911,* Թիֆլիս, 1911:

[3] Ֆոնդի՝ 1890-ական թթ. վերաբերյալ վավերագրերի զգալի մասն անտիպ են: Նրանց որոշ մասը օգտագործել է անվանի պատմաբան Լեոն (Առաքել Բաբախանյանը) իր «Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում 1881–1911» աշխատության մեջ:

Սուրենյանցը նոյեմբերի 13-ին խորհրդին հղած նամակով խնդրում է ԿՀԲԸ-ն վարչությանն առանց ժամանակ կորցնելու միջոցներ ձեռնարկել գաղթականներին օգնելու համար[4]: Ուժասպառ ու սովահար գաղթականները սկսում են օգնության խնդրանքներով դիմել ԿՀԲԸ-ը: Վերջինը, քննարկելով այս հիմնախնդիրը, եզրակացրեց, որ կարող են գործողության մեջ դնել ընկերության կանոնադրության 2-րդ կետը, որով թույլատրվում էր օգնել գաղթականներին: Սահմանները հատող գաղթականների քարավաններն օրեցօր ավելանում էին, իսկ նրանց պատսպարելն ու սովի ճիրաններից փրկելը դառնում էր օրհասական խնդիր: Սկզբնական շրջանում ընկերությունը օգնություն կազմակերպեց սեփական միջոցներով: Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցն իր գրությունից մի քանի օր անց Թիֆլիսի հայոց եկեղեցիներում հավաքված գումարից Խորհրդին ուղարկեց 1500 ռուբլի, ապա ևս 1000 ռուբլի՝ Բաթում փոխադրելու համար[5]: Սկզբնական շրջանում Բաթումում հաստատված գաղթականների թիվը բավականին մեծ էր, ուստի ընկերությունն ուշադրությունը սևեռեց այդ մասնաճյուղի վրա: Բաթումի մասնաճյուղը բացի ֆինանսական օգնությունից նաև փորձում էր լուծել աշխատանքով ապահովելու խնդիրը: 1895 թ. Բաթումում և Թիֆլիսում գաղթականներին օգնելու համար հատկացվեց 2700 ռուբլի[6]:

Կոտորածների ահռելի չափերի արդյունքում գաղթականների թիվը գնալով մեծացավ, և ընկերությունը այլևս չէր կարողանում իր կարողություններով կազմակերպել օգնությունը: Գաղթականների մեծամասնությունն ուներ անհրաժեշտություն նախ և առաջ հագուստի, անկողնու, ինչի արդյունքում էլ գալիս էր հիվանդությունների անխնա տարածումը: Հիվանդների խնամքը քաղաքներում հիմ-

[4] **Լեո,** նշվ. աշխ., էջ 112:
[5] **Նույն տեղում**, էջ 112:
[6] **Նույն տեղում**, էջ 113:

նականում կարողանում էին կազմակերպել, դժվար էր գավառնե-
րում ապաստանած հիվանդ գաղթականների հարցը: Տիֆը և այլ
հիվանդություններ տարածված էին գաղթականների շրջանում:

Անհնար էր իր հայթայթած միջոցներով լուծել ահռելի չափերի
հասած գաղթականների պատսպարման հարցը: Ուստի, ԿՀԲԸ
խորհուրդը 1896 թ. սեպտեմբերի 5-ի № 22 նիստում քննարկում և
որոշում է դիմել Կովկասի կառավարչապետությանը՝ թույլ տալու ի
նպաստ գաղթականների հանգանակություններ կատարել[7], որը
մերժվում է[8]:

Մեր կարծիքով կառավարչապետության մերժումն ուներ մի
քանի դրդապատճառ.

1. Ռուսաստանը չէր ցանկանում սրել հարաբերությունները
Օսմանյան կայսրության հետ:

2. Արևմտահայ փախստականներին համարում էր հեղափո-
խականներ, հաշվի չառնելով ո՛չ սեռը, ո՛չ տարիքը՝ անտեսելով
նույնիսկ նրանց ծանր վիճակը:

3. Կառավարչապետ Գրիգորի Գոլիցինը հայտնի էր իր հա-
կահայ հայացքներով և ցանկանում էր սահմանափակել հայ հասա-
րակական կազմակերպությունների գործունեությունը:

4. Ռուսական իշխանությունները երկյուղում էին, որ հանգա-
նակած դրամական միջոցները կարող են օգտագործվել «հեղափո-
խական» նպատակների համար:

Չնայած կառավարչապետության մերժմանը, այնուամենայնիվ,
մամուլի արձագանքների շնորհիվ ԿՀԲԸ-ն սկսում է ստանալ օգ-
նություններ: Խմբակային և անհատական օգնություններ են ուղար-
կում ԿՀԲԸ աշխարհի տարբեր ծայրերից՝ վստահ լինելով, որ ճիշտ

[7] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 39, թ. 77:
[8] Նույն տեղում, թ. 91:

կկազմակերպվի օգնության գործը: Ամբողջ 1896 թ. ընթացքում ԿՀԲԸ ի նպաստ գաղթականների ստացել է շուրջ 20.000 ռուբլի[9]:

Կառավարչապետությունը տեսնելով, որ անհնար է կանխել գործընթացը, որոշեց իր ձեռքում կենտրոնացնել փախստականներին տրամադրվող օգնությունը: Այդ քայլով կառավարությունը ցանկանում էր ցույց տալ, որ «հոգում է» փախստականների խնդիրը: Գ. Գոլիցինը 1896 թ. դեկտեմբերի 11-ից թույլատրում է Ռուսական կայսրությունում հանգանակություններ կատարել՝ պայմանով, որ ստացված օգնությունն ուղարկվի համապատասխան պետական մարմիններին, որոնք, իրենց հերթին, կբաշխեն ստացված իրերը կամ գումարները[10]: Եվ արդեն 1897 թ. հունվարի 10-ին Կովկասի կառավարչապետությունը հրապարակեց մի շրջաբերական, որով պետական վարչություններին հրահանգվում էր գաղթականներին հասցեագրված նպաստները հավաքել և բաժանել: Այսինքն, ԿՀԲԸ-ն այլևս իրավունք չուներ գաղթականների հասցեագրված նվիրատվություններ ընդունել: Սակայն Ընկերությունը կարողացավ այդ հարցին ևս լուծում տալ, և գաղթականները սկսեցին դիտվել որպես տառապյալներ, իսկ Ընկերության կանոնադրությունը թույլատրում էր օգնել տառապյալներին:

ԿՀԲԸ ի նպաստ գաղթականների շարունակում է աշխարհի տարբեր վայրերից օգնություններ ստանալ: Օրինակ, Մոսկվայի հայ հասարակությունը, ցանկանալով օգնել արևմտահայ գաղթականներին, 1897 թ. սկզբին Երևանի մասնաճյուղին է հատկացնում 1300 ռ. և 27 արկղ հագուստ, որը բաժանվում է շուրջ 550 գաղթականի[11]: 1897 թ. հունվարին Կարսի մասնաճյուղը Բաքվից պ. Համ-

---

[9] *Տեղեկագիր Հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում 1896 եւ 1897 թթ.*, Թիֆլիզ, 1898, էջ 98–101:

[10] **Լեո,** նշվ. աշխ., էջ 119:

[11] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 967, թ. 50:

բարձում Մելիքյանից, ստանում է 1250 ռ.[12]: Ընդհանուր առմամբ ԿՀԲԸ 1897 թ. սկզբի դրությամբ ստացել է մոտ 20.000 ռուբլի[13]:

1897 թ. սկզբին Խորհրդի նախագահ Ա. Անանյանը հերթական նիստում հայտնում է, որ Դանիայի Կոպենհագեն քաղաքում բացված «Հայկական նպաստամատույց հանձնաժողով»-ից 14 հազար ֆրանկ է ստացվել[14]: Քանի որ Խորհուրդը այլևս իրավունք չուներ ընդունելու նման օգնություն, դիմում է կառավարչապետ իշխան Գր. Գոլիցինին, որը թույլատրում է Ընկերությանը ընդունել դանիական օգնությունը: Մինչև 1897 թ. ամառ Դանիայից ստացվում է 17.979 ռ. 04 կ.[15]:

ԿՀԲԸ խորհուրդը ճիշտ ու տեղին օգնություն կազմակերպելու համար կազմում է հատուկ հանձնաժողովներ, որոնք պետք է տեղեկություններ հավաքեին գաղթականների թվաքանակի և կացության վերաբերյալ[16]: Խորհուրդը որոշում է յուրաքանչյուր մասնաճյուղում առանձնացնել մեկ մասնաժողով, որը պետք է քաջատեղյակ լիներ գաղթականների վիճակին և պարբերաբար զեկուցեր խորհրդին, որպեսզի հատկացվող օգնությունը լիներ ավելի նպատակային և կազմակերպված: Ընկերության մասնաճյուղերն անցնում են գործի և պարբերաբար զեկուցագրերով տեղեկացնում իրենց տարածաշրջանի գաղթականների թվաքանակի, կացության և անհրաժեշտ օգնության մասին:

Ընկերության մասնաճյուղերը Խորհրդին տեղեկացնում են ստացված և ծախսված գումարների մասին: Ըստ այդ զեկուցագրե-

---

[12] «Մուրճ», 1897, № 1, էջ 161:
[13] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 967, թ. 34 շրջ.:
[14] «Մուրճ», 1897, № 5, էջ 732:
[15] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 967, թ. 167 շրջ.:
[16] Նույն տեղում, ֆ. 28, ց. 1, գ. 39, թ. 93 շրջ.:

րի, 1896–1897 թթ. գաղթականներին հատկացվել է շուրջ 41.500 ռուբլի օգնություն[17]:

Մինչ հայությունն իր ուժերի ներածին չափով օգնություն էր ցուցաբերում արևմտահայ եղբայրներին, 1898 թ. Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Ի.Ա. Զինովևը պահանջեց Աբդուլ Համիդից հետ ընդունել Ռուսաստանում ապաստանած հայ գաղթականներին: 1898 թ. մարտին բարձրագույն հրաման արձակվեց, որով, իբրև թե, արևմտահայ գաղթականներին թույլատրվում էր, մեկ տարվա ընթացքում հայրենիք վերադառնալու[18]: Արևմտահայ գաղթականների մի մասը հայրենիք վերադառնալու ցանկություն հայտնեց և օգնության հիմնական խնդիրը դարձավ ճանապարհածախսը: ԿՀԲԸ սկսեց հատկացնել ճանապարհածախս և, արդյունքում, արդեն 1898 մայիսին Երևանի մասնաճյուղը հայրենիք վերադառնալու համար ճանապարհածախս հատկացրեց թվով 40 ընտանիքի (131 հոգի)՝ շուրջ 127 ռուբլի[19]: Բաթումի մասնաճյուղը կարողացավ հոգալ շուրջ 700 հոգու ճանապարհածախս՝ հատկացնելով շուրջ 1045 ռուբլի[20]: Սակայն շուտով պարզ է դառնում, որ այս ամենը ռուսական կառավարության հերթական խաղն է, որը փորձում էր ևս մեկ անգամ օգտագործել հայերի խնդիրը՝ Օսմանյան կայսրությունից զիջումներ կորզելու համար: Ի. Զինովևի պահանջը սուլթանը մերժեց՝ պատճառաբանելով, որ հայերի հողերն արդեն բնակեցված են քրդերով ու մուհաջիրներով և նրանց տեղաշարժը նոր արյունահեղության կարող է հանգեցնել: Սուլթանն անգամ առաջարկում է 100 հազար լիրա՝ պայմանով, որ հայերը մնան Կով-

---

[17] *Տեղեկագիր Հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում 1896 եւ 1897 թթ.*, էջ 98–101:

[18] «Նոր Դար», 1898, № 98, էջ 1, «Արմենիա», 1898, № 71, էջ 1, Նույնը տե՛ս նաև «Մշակ», 1898, № 67, էջ 1:

[19] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 364, թ. 28-շրջ.:

[20] **Լեո,** նշվ. աշխ., էջ 177:

կասում կամ արտաքսվեն Սիբիր: Սակարկության արդյունքում սուլթանը հասցնում է այդ գումարը մինչև 160.000 լիրայի: Ռուսական ինքնակալն այս պայմանին ևս չհամաձայնելով՝ ստիպում է, որ սուլթանը 1900 թ. ապրիլի 2-ին կնքի համաձայնագիր: Ըստ այդ համաձայնագրի, Արևմտյան Հայաստանի և Սև ծովի հարավային ափերի երկաթգծի կոնցեսիաներն անցնում էին Ռուսաստանին, և Աբդուլ Համիդը շարունակում էր վճարել 1877–1878 թ. պատերազմի դեռ չմարած ծախսերը: Նիկոլայ II-ն իր հերթին պարտավորվեց այլևս սուլթանին չներկայացնել հայ գաղթականների վերադարձի պահանջ[21]:

1899 թ. հուլիսի 6-ին Ռուսաստանի ներքին գործերի նախարար Ի. Գորեմիկինի կողմից հաստատված նոր կանոնադրությամբ Ընկերության գործունեությունը դադարեցվում է[22]: Այն զրկվում է մասնաճյուղեր ունենալու իրավունքից և վերածվում սոսկ Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերության: ԿՀԲԸ դառնում է նոր բնույթի ընկերություն, որի գործունեությունը սահմանափակվում է Թիֆլիսի սահմաններում: Փաստորեն, գոլիցինյան հակահայ քաղաքականության հետևանքով ընդհատվեց ԿՀԲԸ օգնությունը արևմտահայ գաղթականներին:

ԿՀԲԸ առաջիններից էր, որ օգնության ձեռք մեկնեց արևմտահայ գաղթականներին և ամեն գնով փորձեց սատարել նրանց: Մասնաճյուղերի հետ կանոնավոր աշխատանքի շնորհիվ Ընկերությունը կարողացավ արագ և ճիշտ կազմակերպել օգնության գործը: Օգնությունն ավելի լիարժեք դարձնելու համար ընկերությունը մասնաճյուղերում ստեղծեց հանձնաժողովներ: Նրանց հրահանգվեց զեկուցագրեր ներկայացնել փախստականների քանակի,

---

[21] Տե՛ս **Համբարյան Ա.,** *Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898–1908 թթ.),* Եր., 1999, էջ 17:

[22] **Երկանյան Վ.,** *Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում,* Եր., 1970, էջ 222:

վիճակի և օգնության մասին: Չնայած Կովկասի կառավարչապետության ստեղծած դժվարություններին մինչև 1899 թ. ԿՀԲԸ շարունակեց իր օգնության գործը, և միայն 1899 թ. հուլիսի 6-ի կարգադրությամբ ընկերությունը վերածվեց սոսկ Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերության:

АРМЯНСКОЕ БЛАГОТВОРИТЕЛЬНОЕ ОБЩЕСТВО НА КАВКАЗЕ И ЗАПАДНОАРМЯНСКАЯ ЭМИГРАЦИЯ (1895–1899 ГГ.)

КОСЯН Л.

Резюме

Ключевые слова: Переселенцы, убитые, Кавказское армянское благотворительное общество, губернии, Батум, Карс, Тифлис, помощь, отделение.

Армянское благотворительное общество Кавказа также оказало большую помощь западноармянским беженцам, пережившим политику резни Абдул Хамида II в 1890-х годах. В статье мы попытались научно проанализировать предпринятые шаги и помощь, организованную Армянским благотворительным обществом Кавказа. На основе архивных документов в статье говорится о деятельности филиалов Армянского благотворительного общества Кавказа. Совет распределял помощь эмигрантам через филиалы. Поскольку средств Армянского благотворительного общества было недостаточно, Совет обратился к властям с просьбой разрешить им делать пожертвования в пользу эмиг-

рантов. Однако деятельность Общества осталась незавершенной из-за изменения Устава.

THE ARMENIAN BENEVOLENT SOCIETY OF THE CAUCASUS AND THE WESTERN ARMENIAN EMIGRATION (1895–1899)

QOSYAN L.

Summary

Keywords: Migrant, slaughtered, Caucasian Armenian Philanthropic Society, governorates, Batum, Kars, Tiflis, help, branch.

In the 1890s, the Armenian Benevolent Society of the Caucasus also provided great assistance to the Western Armenian refugees who survived the crushing policy of Abdul Hamid II. In the article, we tried to scientifically analyze the steps taken and the help organized by the Armenian Benevolent Society of the Caucasus.

Based on the archival documents, the article refers to the activities of the branches of the Armenian Benevolent Society of the Caucasus. The Council distributed aid to the emigrants through branches. Since the funds of the Armenian Benevolent Society were insufficient, the Council asked the authorities to allow them to make donations in favor of the emigrants. However, the activities of the Society remained unfinished due to changes in the Charter.